ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 02

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի

խորհրդի նիստի

ք. Աշտարակ **25. 07. 2024թ. ժամը 15^{00}**

Մասնակցում էին՝

Ս. Մովսիսյան	*ՀՀ Արագածոտնի մարզպետ*
Հ. Գույլան	*ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ*
Հ. Գևորգյան	*ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար*
Ա. Գրիգորյան	*ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական*
Վ. Հարությունյան	*ՀՀ Արագածոտնի մարզպետի խորհրդական*
Մ. Դատումյանը	*ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական*
Ա. Մարկոսյան	*ՀՀ Արագածոտնի մարզպետի օգնական*

Մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ

Մարզի համայնքների ղեկավարներ

Ուժային կառույցի ներկայացուցիչներ

Լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

4

Օրակարգում՝

1. Մարզի համայնքների 2024թ. 1-ին կիսամյակի սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների վերաբերյալ:
2. 2025-2027թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերի կազմման, հաստատման գործընթացների վերաբերյալ:
3. Համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերով իրականացվող աշխատանքների վերաբերյալ:
4. Պետական և այլ կազմակերպությունների միջոցով իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքի ուսումնասիրությունների վերաբերյալ:
5. «Հայաստանի Հանրապետության համայնքներին գույք նվիրաբերելու մասին» N 1163-Ա որոշմամբ սահմանված աշխատանքների վերաբերյալ:
6. Մարզի համայնքներում 2023թ. ամենամյա չօգտագործված արձակուրդների վերաբերյալ:
7. Տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային ծառայողների 2024թ. վերապատրաստման դասընթացների կազմակերպման վերաբերյալ:
8. Մարզում իրականացվող դպրոցաշինական ծրագրերի մասին:
9. Այլ հարցեր:

Լսեցին՝

1. Մարզի համայնքների 2024թ. 1-ին կիսամյակի սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների վերաբերյալ */զեկուցող՝ ֆինանսական վարչության պետ Ն. Գալստյան/:*
/Ցուցանիշները կցվում են/:

Ն. Գալստյանը տեղեկացրեց, որ սեփական եկամուտների հավաքագրումը 2024 թվականի առաջին կիսամյակում իրականացվել է 43,8%-ով՝ Աշտարակ՝ 44,6%, Շամիրամ՝ 196,9%, Ապարան՝ 40,4%, Ալագյազ՝ 53,3%, Մեծաձոր՝ 23,0%, Արևուտ՝ 42,2%, Թալին՝ 46,4%, Ծաղկահովիտ՝ 26,0%:

Մարզպետ Սերգեյ Մովսիսյանը հանձնարարեց ՏԿ և ՏԻՀ վարչության պետ Հ. Ասատրյանին համայնքների ղեկավարների աջակցությամբ շարունակական աշխատանքներ տանել, իսկ հավաքագրումը շարունակել նույն մեխանիզմով՝ ապահովելով հավաքագրման պլանավորված ցուցանիշները:

2. 2025-2027թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերի կազմման, հաստատման գործընթացների վերաբերյալ */զեկուցող՝ ֆինանսական վարչության պետ Ն. Գալստյան/:*

Ներկայացվեց համայնքների միջնաժամկետ ծախսային ծրագրերի կազմման, հաստատման գործընթացների վերաբերյալ տեղեկատվություն: Նշվեց, որ վերջնաժամկետ է սահմանվել օգոստոսի 9-ը: Ծրագրերի փաթեթները ներկայացվել են մարզպետի աշխատակազմ: Վերջնական շտկումներից հետո կներկայացվեն ՀՀ կառավարություն սահմանված ժամկետում:

3. Համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերով իրականացվող աշխատանքների վերաբերյալ */զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյան/:*
/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ 2022 թվականին հաստատված Արագածոտնի մարզի 8 համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ընդհանուր 4 017 898 801 ՀՀ դրամ նախնական արժեքով 19 սուբվենցիոն ծրագրերից այս պահին ավարտվել են 17 ծրագրեր, որոնցից Թալին համայնքի Արագածավան և Արտենի բնակավայրերի միջդաշտային ոռոգման համակարգի հիմնանորոգման աշխատանքների մասով ընթանում է ավարտական փաստաթղթերի կազմման գործընթացը: Ընթացքի մեջ են գտնվում Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի թիվ 4 «Հասմիկ մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման և բակային տարածքների բարեկարգման աշխատանքները: Կատարվել է ընդհանուր աշխատանքների շուրջ 70%-ը: Ընթացքի մեջ են նաև Ապարան համայնքի Արագած և Շենավան բնակավայրերում նոր մանկապարտեզների կառուցման ծրագրերը: 2022 թվականի թվով 18 սուբվենցիոն ծրագրերի համար պետական բյուջեի միջոցներով ֆինանսավորմանը չափը կազմում է 1 797 919 880 դրամ:

2023թ. ՀՀ Արագածոտնի մարզում կառավարության կողմից իրականացվող համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանը ուղղված սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել 23 սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթներ: Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հավանության է արժանացել 21 ծրագիր: Վերջնական հաստատվել է 20 ծրագիր՝ 5 409 062 779 ՀՀ դրամ արժեքով:

2024 թվականի ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի ծրագրերից հաստատվել է մարզի 6 համայնքներից ներկայացված 33 սուբվենցիոն ծրագրային հայտ՝ 12 208 736 420 ՀՀ դրամ ընդհանուր նախնական արժեքով /Աշտարակ – 16 ծրագիր, Թալին- 6 ծրագիր, Ապարան- 4 ծրագիր, Ծաղկահովիտ- 2 ծրագիր, Ալագյազ-4 ծրագիր, Արևուտ – 1 ծրագիր/:

Սուբվենցիայի հայտերի գնահատման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացվել է մարզի 6 համայնքների կողմից ներկայացված 23 սուբվենցիայի ամբողջական փաթեթ: Ներկայացված փաթեթներից միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հաստատվել են 11 ծրագիր ընդհանուր 8 815 873 410 դրամ արժեքով: Հաստատված ծրագրերից 5-ում աշխատանքները սկսվել են, իսկ 6-ը մրցութային փուլ են:

Մարզպետ Ս. Մովսիսյանը հանձնարարեց քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյանին հետևողական լինել այդ ուղղությամբ տարվող աշխատանքների նկատմամբ, աշխատանքներում հայտնաբերված թերությունների, դանդաղ տեմպի կամ նկատված խնդիրների մասին գրությամբ տեղեկացնել տվյալ ծրագրի պատվիրատու հանդիսացող մարմիններին:

Հանձնարարվեց նաև քննարկման և ուսումնասիրության արդյունքում անհրաժեշտ հիմնավորումներով դիմել ՀՀ առողջապահության նախարարություն Աշտարակի բժշկական կենտրոնի մահճակալների թվաքանակի համալրման վերաբերյալ՝ քաղաքաշինական նորմերին համապատասխան եզրակացության առկայության դեպքում:

4. Պետական և այլ կազմակերպությունների միջոցով իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքի ուսումնասիրությունների վերաբերյալ */զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ ի կատարումն ՀՀ ՏԿԵ նախարարի հանձնարարականի ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի մասնագետները պարբերաբար այցելում և տեղում ծանոթանում են մարզի տարածքում պետական և այլ կազմակերպությունների միջոցով իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքին: Ուսումնասիրության արդյունքները ներկայացվել են նախարարություն:

Մարզի երեք բժշկական կենտրոններից Թալինի և Աշտարակի բժշկական կենտրոններում շինաշխատանքներն ընթանում են նորմալ և թերություններ չեն հայտնաբերվել, միայն Աշտարակի հիվանդանոցի հին շենքի քանդման հետ կապված պետք է որոշում կայացվի,իսկ Ծաղկահովիտի Բ/Կ-ում, ինչպես նախորդ այցելությունների, այնպես էլ վերջին այցելության ժամանակ, արձանագրվել է, որ շինաշխատանքները ընթանում են շատ դանդաղ, և նախորդ այցերի ժամամանակ հայտնաբերված թերությունները չեն վերացվել:

Ալագյազում կառուցվող 144 տեղանոց մոդուլային մանկապարտեզի աշխատանքները ևս ընթանում են դանդաղ, իսկ Ալագյազի համայնքային կենտրոնի շինաշխատանքների ավարտը՝ ըստ կապալառուի, կլինի նախատեսվածից շուտ:

Նշվեց, որ ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ են ընթանում Ապարան համայնքի Լուսագյուղ բնակավայրում, Երնջատափ - Շողակն, Հյուսիս –Հարավ ճանապարհի Մ1 Երևան-Գյումրի-Բավրա, Ներքին Բազմաբերդ–Կաքավաձոր, Թաթուլ–Կանչ-Հակո ճանապարհահատվածներում, Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահմանի միջպետական նշանակության ավտոճանապարհահատվածում:

Վերանորոգվում և հիմնանորոգվում են Ուշիի բնակավայրի մանկապարտեզի շենքը, Աշտարակ քաղաքի թիվ 5 ավագ դպրոցը, Աշտարակ համայնքի Սասունիկ բնակավայրի դպրոցը, Թալին համայքի Արագածավանի թիվ 1 միջնակարգ դպրոցը, Լուսակն և Գառնահովիտ բնակավայրերի դպրոցները: Տեղեկատվություն ներկայացվեց նաև Փարպի համայնքի 5-րդ դարի Ծիրանավոր եկեղեցու շինարարական աշխատանքների ընթացքի մասին:

Մարզպետը ևս մեկ անգամ կարևորեց *աշխատանքների վերահսկման գործընթացը և հանձնարարեց* վեր հանել աշխատանքների հապաղման, թերի կատարման պատճառները, լուծման ուղիներ գտնել:

5. «Հայաստանի Հանրապետության համայնքներին գույք նվիրաբերելու մասին» N 1163-Ա որոշմամբ սահմանված աշխատանքների վերաբերյալ */զեկուցող՝ քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Հ. Ստեփանյան /:*

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ ՀՀ պետական բյուջեից մարզպետարաններին հատկացված միջոցներով կառուցված՝ ՀՀ կառավարության 17.10.2013թ. N 1163-Ա որոշմամբ սահմանված գույքը նվիրաբերության պայմանագրերի միջոցով պետք է նվիրաբերվեր մարզի համայնքներին, սակայն մինչ օրս միայն Ապարան համայնքի Լուսագյուղ և Սարալանջ բնակավայրերի գազատարերի կառուցման աշխատանքների մասով են կնքվել պայմանագրեր, որոնք պետք է թարմացվեն: Որոշմամբ սահմանված ցանկից մնացած գույքերի մասով համայնքների կողմից գույքային իրավունքների պետական գրանցում չեն կատարվել, և հետևաբար նվիրաբերության պայմանագրեր չեն կնքվել:

Մարզպետը առաջարկեց համայնքի ղեկավարներին կարևորել խնդիրը և սեղմ ժամկետում ավարտին հասցնել ՀՀ կառավարության 17.10.2013թ. «Հայաստանի Հանրապետության համայնքներին գույք նվիրաբերելու մասին» N 1163-Ա որոշմամբ սահմանված աշխատանքները և տեղեկատվություն ներկայացնել ՀՀ Արագածոտնի մարզպետի աշխատակազմ:

6. Մարզի համայնքներում 2023թ. ամենամյա չօգտագործված արձակուրդների վերաբերյալ */զեկուցող՝ ՏԿ և ՏԻՀ վարչության պետ Հ. Ասատրյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Հ. Ասատրյանը զեկուցեց, որ յուրաքանչյուր տարի, ՏԿԵ նախարարի հանձնարարականի համաձայն, մարզպետի աշխատակազմի կողմից ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցներ համայնքապետարանների աշխատակազմերի և համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների նախորդ տարիների չօգտագործված ամենամյա արձակուրդները տրամադրելու ուղղությամբ: Նշվեց, որ 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ Արագածոտնի մարզի համայնքներում ամենամյա չօգտագործված արձակուրդների ընդհանուր գումարը կազմել էր 12,172,612 մլն. ՀՀ դրամ: Մարզպետի աշխատակազմի և համայնքների ղեկավարների կատարած աշխատանքների արդյունքում չօգտագործված արձակուրդային 12,172,612 մլն. ՀՀ դրամից հուլիսի 1-ի դրությամբ մարվել է 11,736 մլն. ՀՀ դրամ: Աշխատանքներն ամբողջությամբ ավարտել են բոլոր համայնքներում, բացառությամբ՝ Ապարան համայնքի: Ապարան համայնքում այս ուղղությամբ ևս մեծ աշխատանքներ է կատարվել: Մնացել է ընդամենը մեկ աշխատակցի չօգտագործված արձակուրդային գումար, որի չափը կազմում է 436 հազար ՀՀ դրամ:

7. Տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքային ծառայողների 2024թ. վերապատրաստման դասընթացների կազմակերպման վերաբերյալ */զեկուցող՝ ՏԿ և ՏԻՀ վարչության պետ Հ. Ասատրյան/:*

/Զեկույցը կցվում է/:

Զեկուցվեց, որ «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ համայնքային ծառայողները յուրաքանչյուր երեք տարին մեկ ենթակա են պարտադիր վերապատրաստման: Այս տարի մարզում նախատեսված է կազմակերպել և անցկացնել 1 խումբ 20 համայնքային ծառայողների և 1 խումբ 25 տեղական ինքնակառավարման մարմինների վերապատրաստման դասընթացներ: Վերապատրաստումն իրականացնում է օրենքով սահմանված կարգով ընտրված կազմակերպությունը, իսկ վերապատրաստման ծրագրերը հաստատում է ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը: Վերապատրաստման

դասընթացներն արդեն մեկնարկել են: Համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացները մեկնարկել են հուլիսի 22-ից և ավարտվելու են օգոստոսի 1-ին: Տեղական ինքնակառավարման մարմինների վերապատրաստման դասընթացները մեկնարկել են հուլիսի 24-ին և ավարտվելու են հուլիսի 26-ին: Համայնքային ծառայողների վերապատրաստման դասընթացներն անցկացվում են Թալին համայնքում, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների դասընթացները՝ Ծաղկահովիտ համայնքում:

8. Մարզում իրականացվող դպրոցաշինական ծրագրերի մասին */զեկուցող՝ մարզպետի խորհրդական Ա. Գրիգորյան/ :*

/Զեկույցը կցվում է/:

Ա.Գրիգորյանը տեղեկատվություն ներկայացրեց ՀՀ Կառավարության «2021-2026 թվականներին կառուցվող, վերակառուցվող, հիմնանորոգվող 300 դպրոց 500 մանկապարտեզ ծրագրի» շրջանակում իրականացվող աշխատանքների մասին: Արագածոտնի մարզում կառուցվում է 24 դպրոց, ևս 1 դպրոց կառուցվում է բարեգործական ծրագրով: 1-ի կառուցումն ավարտվել է, 12-ը գտնվում են կառուցման փուլում, 7 դպրոցում մրցույթը կայցել է, կան հաղթողներ, 7-ից 2-ում՝ Վարդգես Պետրոսյանի անվան հիմնական և Ռյա-Թազայի դպրոցներում, ըստ շինարարների, առաջիկա 2 շաբաթների ընթացքում շինարարությունները կմեկնարկեն: Եվս 5 դպրոց գտնվում է մրցութային փուլում:

Նշվեց, որ Արագածոտնի մարզպետի աշխատակազմի կողմից դպրոցներում իրականացվում են աշխատանքներ կարիքների գնահատման, հավաքագրման նպատակով: Հավաքագրվել և արդեն իսկ 40 դպրոցների համար նախանշված աշխատանքների անհրաժեշտ փաստաթղթերն են ձեռք բերվել, որոնց ամբողջական փաթեթները կուղարկվի ԿԳՄՍ նախարարության հաստատմանը՝ աշխատանքներն սկսելու նպատակով:

ԿԳՄՍ նախարարության ԾԻԳ-ի և Արագածոտնի մարզպետի աշխատակազմի համագործակցությամբ Արագածոտնի մարզի 63 դպրոցներում կհիմնվեն բնագիտական առարկաների լաբորատորիաներ՝ նոր գույքով և լաբորատոր նյութերով հագեցած, ևս 4 դպրոցում լաբորատորիաներ արդեն հիմնվել են «Իմ քայլը» հիմնադրամի կողմից: Այսպիսով, 67 դպրոցներից 18-ում հիմնվել են լաբորատորիաներ, իսկ 49 դպրոցներում աշխատանքներ են տարվում լաբորատորիայի համար նախատեսված սենյակների ընթացիկ նորոգման համար համապատասխան փաստաթղթերի ձեռքբերման ուղղությամբ: Առաջիկայում մարզպետի աշխատակազմը կհավաքագրի ամբողջական փաստաթղթերը և կներկայացնի ԿԳՄՍ նախարարության հաստատմանը, որից հետո լաբորատորիաների նորոգման աշխատանքները կմեկնարկեն:

Մարզպետի տեղակալ Հ. Գույլանի կողմից ներկայացվեց տեղեկատվություն քաղաքաշինության բնագավառում լիցենզավորված տնտեսվարող սուբյեկտներին օրենսդրական փոփոխությունների մասին իրազեկելու վերաբերյալ:

Այլ հայտարարություններ և հարցեր չեղան: Ամփոփելով մարզի խորհրդի նիստը՝ մարզպետ Ս. Մովսիսյանը շնորհակալություն հայտնեց ներկաներին համատեղ աշխատանքի համար:

ՀՀ Արագածոտնի մարզպետ՝

Սերգեյ Մովսիսյան